

ԼՈՒԻ ՓԱՍՏՅՈՒ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շաբ. Բազմ. 1954, թիւ 8-10, էջ 229)

Փաստէօնի սկզբնական պարպումները կը սկսէին շարք մը խիստ պարզ երեւոյթներու ուսումնասիրութիւնովը:

Փաստէօն ուղեց հասկնալ, թէ ինչպիսի՞նք ազդեցութիւններու ներքեւ շաքարը ալքոլի կը վերածուէր եւ ինչո՞ւ ալքոլը կը քացիւ: Մէկ խօսքով՝ ան կ'որոշէր լուծելի խմորումներու դադարները:

Մինչեւ Փաստէօն, տիրապետող համոզումը այն էր, թէ այդ խմորումները տեղի կ'ունենային ինքնաբերաբար, առանց արտաքին որ եւ է ազդեցութեան, պարզապէս նիւթին կրած փոփոխութիւններովը:

Փաստէօնի տարօրինակ թուեցաւ այս ըմբռնելակերպը, ու քացիութիւն ենթարկուած դիւրիչն կաթիլ մը առնելով, ուշի ուշով կը քննէր մանրէագէտով: Մեծ եղաւ իր զարմանքը, երբ անոր մէջ կը նշմարէր փոքր էակներու հոծ բազմութիւն մը: Փաստէօնի հանճարը անմիջապէս կը կռահէր այդ էակներու գոյութեան կարեւորութիւնը, ու խորհիլ կու տար թէ անոնք զեր մ'ունին կատարելիք խմորման բարդ գործողութեանը ընթացքին:

Իր սիրելի մէկ ընկերոջը հետեւեալ յայտնութիւնները կ'ընէր 1860-ին. «Կարելի եղած չափով կը հետեւիմ խմորումներու ուսումնասիրութեանը, որոնք մեծ կարեւորութիւն ունին մահուան եւ կենաց անթափանցելի խորհուրդին հետ»:

Հետագային, իր ուսումնասիրութիւններովը, ահա այդ խորհուրդն էր որ քոզադերձ պիտի ընէր:

Փաստէօն, քացիութիւն ենթարկալ դիւրիչ կաթիլին մէջ տեսած էակներուն էութիւնը ճշդելէն ետք, միջոցառման ասէղի անուանովը կը մկրտէր զանոնք, ու կը ջանար պատճառաբանել անոնց գոյութեան իրաւունքը, ինչպէս նաեւ ուրկէ՝ եկած ըլլալնին:

Փաստէօն կռահելով որ այդ փոքրիկ սունկերը օդին միջոցով էր որ կը փոխադրուէին, հետեւեալ փորձը կը կատարէր:

Որոշ քանակութեամբ դիւրի, ինչպէս նաեւ դիւրաւ նեխող կարգ մը հեղուկներ՝ մէզ, արիւն, մսի ջուր եւ այլն՝ լաւ մը եռացնելէ ետք, զանոնք պարունակող սրուակներուն բերանները այնպէս մը կը դոցէր, որ այլեւս օդին միջոցով փոխադրուող փոքրիկ էակներու ազդեցութենէն բոլորովին զերծ մնային: Նոյն հեղուկներէն որոշ քանակ մըն ալ եռացումի ենթարկելէ ետք, զանոնք պարունակող սրուակներուն բերանները բաց կը ձգէր:

Փաստէօն այս ձեւով ստուգեց, թէ զոց սրուակներու պարունակած հեղուկներէն ոչ մէկը, ամիսներ եւ միջեւ իսկ տարիներ վերջ, չէր նեխած: Մինչդեռ բաց ձգուած սրուակներուն հեղուկները՝ քիչ ժամանակ ետք խմորումի կ'ենթարկուէին:

Այս պարզ փորձերով, Փաստէօն կ'ապացուցանէր թէ դիւրաւ նեխող հեղուկ մը երբ կ'եռացուի՝ օդին միջոցով փոխադրուած փոքրիկ էակները կը մեռնէին, ու այլեւս այդ հեղուկը խմորումէ զերծ կը մնար, եթէ բոլորովին զոց պահուէր զայն պարունակող ամանը, ու այսպէսով արդիւնէր նորամուտ էակներու փոխադրութիւնը օդին միջոցով:

Ահա թէ ինչո՞ւ առաջին խումբին պատկանող հեղուկները, մինչեւ իսկ տարիներ ետք, անաղարտ կը մնային, մինչդեռ երկրորդ խումբին պատկանողները՝ եռացումէն ժամանակ մը ետք՝ կը քացիւին կամ կը նեխէին:

Ինքնին վերջին ծայր պարզ ու համոզիչ այս փորձով, Փաստէօն կ'ապացուցանէր

մանրէներուն գոյութիւնն ու կարեւորութիւնը:

Փաստէօն աստիճան մը եւս խորացնելով իր պարպումներն ու զննութիւնները, կը տեսնէր թէ քացիութիւն ենթարկուած դիւրիչն մակերեսը ծածկուած կ'ըլլար շրջարշաւման փափուկ քողով մը, որուն ժողովրդական լեզուով՝ մար անունը կու տանք:

Այդ քողը ամբողջապէս կազմուած է քացիութիւն յառաջ բերող փոքրիկ սունկին՝ միջոցառման ասէղի անթիւ ու անհամար խմբաւորումներովը: Վերոյիշեալ բոյսը՝ ապրելու համար օդի կը կարօտի. շնորհիւ արտադրած տեսակ մը ճարպային մարմինին, հեղուկին երեսը կը մնայ ու մեր յիշած շղարշաւման քողը կը կազմէ:

Քացիութիւն երեւոյթի ընթացքին, անոր վիճակուած կարեւոր դերը կը կայանայ, օդին թթուածինը առնելով միացնել դիւրիչն մէջ զտնուած ալքոլին, ու այսպէսով զայն քացախի վերածել:

Երբ տրամադրելի ալքոլը կը սպառի, ու քացիութիւն կ'ամբողջանայ, պէտք է որ միջոցառման ասէղի կազմած քողը՝ մաքուր՝ հեղուկին յատակը իջեցուի, հակառակ պարագային՝ այդ փոքրիկ բոյսը իր աւերածութիւնը շարունակելով՝ տրամաւերելի քացախն ալ կը տարրալուծէ, ու ի վերջոյ զայն կը վերածէ բնածխային թթուութիւնի եւ ջուրի:

Ինչպէս որ կը տեսնուի, դիւրիչն քացիութիւն եւ քացախին ալ ջուրի վերածումը, միջոցառման ասէղի միջոցով յառաջ եկած տեսակ մը անխառնութիւն յաջորդական դրուագներն են:

Փաստէօն կը ստուգէր նաեւ թէ միջոցառման ասէղին 55° տաքութեամբ կը մեռնէր, որով՝ դիւրիչն քացիութիւն, ինչպէս նաեւ քացախին ալ ջուրի այլափոխումը արդիւնէլու համար, դիւրիչ ճարտարաբանութեամբ զբաղողներուն կը յանձնարարէր, դիւրիչն կամ քացախը 55° աստիճանի տաքութեան ենթարկելէ ետք, զոց աման-

ներու մէջ պահել: Փաստէօնի այս պարզ գիւտը՝ միլիոններ չահեցնել կու տար Ֆրանսայի:

Ողբելից ըմպելիներու եւ պահածոներու պատրաստութեան ճարտարարուեստները հսկայաքայլ կը զարգանային ու կը յառաջադիմէին:

Գիւրիչն պէս՝ դարեջուրն ալ ունի իր հիւանդութիւնը. ան ալ քացիութիւն ենթարկալ ըմպելի մըն է: Փաստէօն՝ Ֆրանսայի եւ Անգլիոյ դարեջուրի գործատուները այցելելով, մանրակրկիտ պարպումներէ ետք՝ կը ստուգէր, թէ այս պարագային ալ քացիութիւն միջոցառման միջոցով տեղի կ'ունենար, որով այս ըմպելի ալ քացիութիւն զերծ պահելու համար, բաւական էր 55° աստիճանի տաքցնել ու զոց շիջելու մէջ պահել:

Գարեջուրի գործարանատէրերը այս միջոցը կիրարկելով, մեծապէս կ'օգտուէին Փաստէօնի գիւտէն: Ահա անոնցմէ մին էր Պարոն Եանկերը, որ ինչպէս տեսնաւ, Փաստէօնի էտիմպուրկ այցելած ատեն չքեղ կառախումբ մը կը տրամադրէր Ֆրանսացի պատուիրակներուն, եւ Փաստէօնի էտիմպուրկէն մեկնած օրը՝ 500 ոսկիի նուիրատուութիւն մը կ'ընէր այդ քաղաքին համալսարանին:

Փաստէօնի գիւտերու ազդեցութիւնով մահացու հարուած մը կը ստանար ինքնասերութիւն (մեմբրասիտ սրմոքանէ) բազմադարեան տեսութիւնը:

Նախ քան Փաստէօն այն համոզումը կը տիրէր, թէ բնութեան ծոցին մէջ կեանքը ինքնաբերաբար ալ կրնար երեւան գալ: Ըստ այդ վարկածին, անհրաժեշտ չէր որ անպայման մուկէ մը մուկ մը ծնէր, այլ նաեւ ան կրնար ստեղծագործուիլ ինքնաբերաբար, զոր օրինակ՝ ցորենի մէջ թաղուած կեղտոտ չապիկէ մը:

Նոյնպէս կը հաւատային թէ միսէն կը ծնէին որդն ու ճճին, ջուրէն՝ ձուկերն ու զանազան փոքրիկ կենդանիները, ասոնց մէջ ըլլալով նաեւ միջոցառման ասէղին:

գեկուցումին պարունակությունը: Վստահ եմ որ Կաճառը պիտի գնահատե այն փութկոտությունը, որ ցոյց կու տամ, դրժելու համար պարոն Քոլենի անհեթեթ հակասությունները, ու պէտք կը համարիմ յայտարարելու արդար համեստութեամբ՝ թէ միշտ նկատի ունեցած եմ, որ այս Կաճառին մասնակցություն կը պարտիմ մի՛ միայն ձեր բարեկամեցողութեան, եւ ոչ թէ ուրիշ իրաւունքի մը: Այս պատճառաւ ալ, ամէն մարդէ աւելի՛ ես ինքս իմ մասին խոստապահանջ գտնուելու պարտադրանք կը դգամ, այն գեկուցումներուն համար որ ձեզի կը ներկայացնեմ: Գիտակից եմ, թէ շատ շուտով վարկս պիտի կորսնցնէի՝ եթէ ձեզի սխալ, կամ մինչեւ իսկ կասկածի ենթակայ դէպքեր յայտնարերէի»:

Բժշկական Կաճառը՝ Փաստօնի այս արդար առաջարկներուն ընդառաջ երթալով, երեք անգամներ կ'ընտրէր, միանգամ ընդ միշտ լուսաբանուելու համար: Քանի մը օր ետքը Փաստօնը քննիչ յանձնաժողովին կը տրամադրէր շառաւիղ մեռած երեք հաւեր:

Ասոնցմէ մէկը քննուելէ ետք, կը հաստատուէր Փաստօնի յայտարարութիւններուն անառարկելի ճշգրտութիւնը, ու ըստ այնմ հետեւեալ գեկուցումը կը պատրաստուէր, որուն ներքեւ առաջին ստորագրողը՝ նոյնինքն տոքթ. Քոլենն էր:

«Յետ կատարուած քննութիւններուն — կ'եզրափակէր պարոն Պուլէյ, որուն յանձնուած էր գեկուցադրին պատրաստութիւնը — պարոն Քոլեն յայտարարեց թէ՛ այլ եւս անօգուտ էր միւս երկու հաւերուն դիազնոսթիկանը կատարել, քանի որ դիազնոսթեան ենթարկուած հաւուն արեան մէջ ախնայաւոր կերպով շառաւիղի մանրէներուն գոյութիւնը հաստատուեցաւ»:

Այսպէսով՝ միանգամ ընդ միշտ կը փակուէր Փաստօնի եւ Քոլենի միջեւ ծագած հաւերու պատմական բանավէճը, ու

անգամ մը եւս կը յաղթանակէր Փաստօնի հմայքը:

Ժամանակ մը ետք Փաստօն կը բացատրէր նաեւ «Անիծեալ արօտատեղիներու» դադունքը: Ան՝ անառարկելի փորձերով կը հաստատէր թէ այդ վայրերուն տեւականօրէն վարակման բոյներ հանդիսանալուն պատճառը՝ շառաւիղ մեռած վեհադաններուն անխնամ կերպով թաղուելն էր: Ժամանակի ընթացքին, դիակներով սնող ճճիներու աղղեցութեան ներքեւ, շառաւիղի մանրէները հողին երեսը կը փոխադրուէին, ու այսպէսով տեղի կ'ունենար այդ շրջաններուն մէջ արածող ոչ-խարներուն վարակումը: Փաստօն, շառաւիղի մանրէն ու անոր փոխանցման կերպը գտնելէն ետք՝ կը յաջողէր անոր դարմանն ալ ապահովել:

Նկատի ունենալով որ թույնազդիներու մարմնին բնական ջերմութեան աստիճանը արգելք կը հանդիսանար անոնց շառաւիղ վարակումին, հետեւեալ տրամաբանական փորձերուն կը ձեռնարկէր.

Հաւու մը մսի ջուրին մէջ շառաւիղի մանրէներ սերմանելէ ետք, 45 աստիճան տաքութեան ենթարկելով՝ կը տեսնէր թէ ո՛չ միայն մանրէները կը դադրէին աճելէ, այլ նաեւ կը մեռնէին: Իսկ 42—43 աստիճանի ջերմութեան աղղեցութեան ներքեւ՝ մանրէն կ'ապրէր ու կը շարունակէր աճիլ, բայց մանրէին ծնունդ տուող գրնդիկները (սպոր) այլեւս չէին կադմուի: Որպէսզի այդ սպորներն ալ կադմուէին, պէտք էր ջերմութիւնը 30—35 աստիճանի իջեցնել:

Շառաւիղի մանրէն 42—43 աստիճանի տաքութեան ենթարկելով, տարօրինակ նոր յատկութիւն մը եւս կը ստանար: Ան կը շարունակէր առանց սպորի աճիլ, բայց եթէ եօթը կամ ութը օր մնալէն ետք ոչխարներու ներարկուէր, փոխանակ փորձի կենդանիները բոլորն ալ առանց բացառութեան մեռցնելու, միայն 50 առ հարիւր տոկոսով կը մահանային:

Իսկ եթէ մանրէները 42—43 աստիճան տաքութեան ենթարկուէին տասնէ տասներկու օր ետք ներարկուէին՝ փորձի կենդանիները թեթեւ կերպով կը վարակուէին հիւանդութենէն, բայց անոնցմէ ոչ մէկը չէր մեռնէր, ու հետագային ախտադրժ դառնալով, չէին աղղուէր մինչեւ իսկ շառաւիղի մանրէին թարմ ու մահացու ներարկումներէն:

Ահա այս գործելակերպով շառաւիղի մանրէները տաքութեան եւ ժամանակի աղղեցութեամբ տկարացնելու դրութիւնը երեւան հանելով, Փաստօն՝ առաջին անգամ ըլլալով բժշկութեան պատմութեան մէջ հիմը կը դնէր պատուաստումի միջոցով շարք մը հիւանդութիւններու ախտադրժումին: Այդ օրը, Փաստօն հետեւեալ կերպով կ'արտայայտէր իր արտին անհուն ուրախութիւնը. «Երբք պիտի չմխիթարուէի, եթէ օգնականներուս հետ կատարած այս դիւտա Փրանսական յղացում մը չըլլար»:

Բժշկական Կաճառի 1881-ի 28 փետրուարի նիստի ընթացքին, կը յայտարարուէր ու կը փառաբանուէր Փաստօնի այս զգայացուց նուաճումը:

Անասնաբոյժներն ու անասնաբուժութեամբ զբաղողները բոլո՛ւն հետաքրքրութեամբ կը համակուէին, լսելով Փաստօնի այս զմայլելի յայտնութիւնները, ու կը խնդրէին իրմէ որ բարեհաճէր իր փորձերը կրկնել, դիտնականներէ բաղկացած հեղինակաւոր յանձնախումբի մը առջեւ: Փաստօն սիրով կ'ընդունէր այս առաջարկը, ու մանրակրկիտ կերպով կը պատրաստէր կատարուելիք փորձերուն յայտադիրը:

Մըլէնի Երկրագործական Միութիւնը Փաստօնի կը տրամադրէր 60 ոչխար, որոնցմէ 25 հատին տասներկու օրէ ի վեր հինգած շառաւիղի մանրէ պիտի ներարկուէր. իսկ քանի մը օր ետքը, այդ նոյն ոչխարներուն, ինչպէս նաեւ քանիսն ուրիշ խումբի ոչխարներու՝ որոնց կան-

խաւ որ եւ է ներարկում չէր կատարուած՝ շառաւիղի թարմ ու մահացու մանրէներէն պիտի ներարկուէր:

Փաստօն՝ կանխաւ մարդարէի մը պէս հետեւեալ գուշակութիւնը կ'ընէր. — 25 ոչխարներու առաջին խմբակէն ոչ մէկը պիտի մեռնէր, մինչդեռ երկրորդէն՝ ոչ մէկը պիտի փրկուէր:

Կատարուելիք փորձերէն օր մը առաջ, անասնաբոյժներու պաշտօնաթերթը հետեւեալ կերպով կը բանաձեւէր իր վերապահումները. «Եթէ պարոն Փաստօն յաջողելու ըլլայ, իր հայրենիքին մեծ բարիք մը մատուցած պիտի ըլլայ, ու այդ պարագային իր հակառակորդները պէտք է, ինչպէս հին ժամանակներու գերիները, իրենց ճակտին դափնեպսակներ դրած, շղթայակապ ու կորաքամակ հետեւին անմահ յաղթանակի կռքին ետեւէն: Բայց պէ՛տք է որ յաջողի ան, միայն այդ գնով կ'ընայ յաղթել: Բա՛յց... պարոն Փաստօն թող չմոռնայ որ Տարպեան ժայռը Կապիտոլի կողքին կը գտնուի »:

Վերջապէս կը հասնէր անհամբեր կերպով ախնայուած պահը, 1881-ի Մայիսի հինգը: Գիտնականներու եւ ժողովրդեան եռուղեւին մէջ, Փաստօն կը ձեռնարկէր իր փորձերուն, իր երեք օգնականներուն՝ Ռուի, Շանպեուանի եւ Թիւլիէի աջակցութեամբ:

Ըստ կանխաւ տրուած որոշումին՝ Փաստօն այդ օրը կը պատուաստէր քսանը հինգ ոչխարները, իսկ Յունիս մէկին՝ ան շառաւիղի մահացու մանրէները կը ներարկէր այդ ոչխարներուն, ինչպէս նաեւ 25 ոչխարներու՝ որոնք նախապէս պատուաստուած չէին:

Առ առաւելն երկու օրէն Փաստօնի գուշակութիւնները պէտք էին իրականանալ, որ է ըսել՝ առաջին խումբէն ոչ մէկ ոչխար պիտի մեռնէր, իսկ երկրորդէն՝ ոչ մէկը պիտի փրկուէր:

Փաստօն նոյնքան ջղայնացած էր՝ որքան իր հակառակորդները, ու ալ չկա-

ընկալուի զսպել իր անհամբերութիւնը, սրտին խորքէն կը բացազանջէր. «Պիտի ուղէի երկու օր աւելի ծերացած ըլլալ»։ Փաստէօն՝ փորձի ենթակայ ոչխարներուն հսկողութիւնը օգնականներուն յանձնելով, կը վերադառնար Փարիզ։

Փաստէօն հսկումի առաջին դիւերը անքուն անցընելէ ետք, հետեւեալ օրը առաւօտեան սա հեռագիրը կը ստանար. «Երէկ պահ մը սարսափահար եղանք — կը տեղեկագրէին իր օգնականները — տեսնելով որ պատուաստուած ոչխարներէն մէկուն ջերմութեան աստիճանը մտահոգիչ կերպով կը բարձրանար։ Այս առաւօտ անիկա բոլորովին առողջացած է»։

Յանձնախումբի անդամներուն ժամադրութիւն տրուած էր, յաջորդ օրն իսկ՝ Յունիս 2-ի երեկոյեան՝ Մըլէն գտնուիլ։

Փաստէօն մեկնելէն առաջ, անասնաբոյժ պարոն Ռոսինեոլէն հետեւեալ դատեպնդիչ հեռագիրը կը ստանար. «Արդիւնքը հիանալի է, չպատուաստուած ոչխարներէն տասներորդ հատը արդէն շառպոնէ մեռան, մնացեալներն ալ մահամերձ են. դալով պատուաստուածներուն՝ բո-

լորն ալ առողջ են ու ոտքի վրայ կանգնած»։

Փաստէօն երբ երեկոյեան Մըլէն կը ժամանէր, զինքը ընդունող խուռներամ բաղմութեան ոգեւորութիւնը դադարեցնելով կը հասնէր։ Փաստէօն յաղթանակած էր, չպատուաստուած ոչխարները մեռած էին, իսկ միւսները՝ ողջ մնացած։

Փաստէօնի հակառակորդներէն մէկը, ներկաներուն հոծ բաղմութիւնը ճեղքելով, կ'երթար անոր ձեռքը սեղմելու եւ ըսելու. «Ահա՛, ըստ իս, այն ուղեցոյցը որ պէտք է որդեգրել այսպիսի պարագաներու մէջ։ Պատիւ մըն է իր սխալը ճանչնալը, եւ պատիւ մըն է՝ անտեսուած արժանիքին մատուցուած գնահատանքը»։

Երախտագէտ էին ոչ միայն մարդիկ, այլ մինչեւ իսկ կենդանիները, որոնք եթէ հնարաւորութիւն ունենային արտայայտուելու՝ օրհնէնքներ պիտի բանաձեւէին իրենց ազատարարին։

Բժշ. Պ. ՄԻՍԱԿԵԱՆ

(Շարունակելի)

ԼՈՒԻ ՓԱՍՏԷՕՆ-Ի ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔԻՆ ՄԷՋ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՃՇԴՈՒՄՆԵՐ

Թիւ	Բագմավիպի էջ և սիւնակ	տողը վերէն	վրիպակ	հշգում
1953	8 - 10	173ա	3	խմորումով
»	» - »	173ա	32	և թէ անէութիւնէն
»	» - »	173բ	17	յղկումին և պատրաստութեան
1953	11 - 12	253ա	9	համոզել
»	» - »	255բ	23	սերունդը
»	» - »	257բ	25	այս խօսքերուն
»	» - »	260ա	35	հաստատութեանց
1954	1 - 2	38բ	5	կատղածութեան
»	6 - 7	179ա	6	հինգ միլիոն

Մ. ԲԱՐԱՊԵԻ

ՀԱՅ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՆ

(Շար. տե'ս «Բագմ.» 1954, ք. 8-10 էջ 237)

Բ. — ԳԻՐՔ ՀԱՐՑՈՂԱՑ

Վենետիկի Ս. Ղազարու Բարսեղեան գրութիւններու երկրորդ խումբը կը բովանդակէ այն ձեռագիրները որ կրնան դասուիլ իրենց խորագիրներուն համաձայն Գիրք հարցողաց-ի մէջ. այս անուն տակ հաւաքուած են Ս. Բարսղի գրութիւններու հաւաքածոյ մը՝ Ճշնողական (Asceticon) անունով ճանչցուած։ Եւ

որովհետեւ Հ. Կրիպոմոն խորապէս ուսումնասիրած է ասոր ձեռագրական աւանդութեան ամբողջութիւնը, թէ՛ սկզբը-նազրին եւ թէ՛ լատին ու արեւելեան թարգմանութիւններուն մէջ, կը համարենք թէ կրնանք համառօտ ըլլալ։ Հ. Կրիպոմոնի կարծիքով հայերէն ճշնողական գրութիւնը (corpus asceticon) կը կազմուի հետեւեալ կտորներէ. Ներածութիւն 5 եւ 4. - 361 (կամ 362) Հարցումներ - և հուսկ Կանոնականք՝ 24 (Epitimia) (54)։

(54) Ներած. 5 = ճառ ճշնողական, PG 31, սիւն 881-888. Ներած. 4 = Ներած. Մեծ կանոններու, PG 31, սիւն 889-902, 361 (կամ 362). Հարցումները թարգմանութիւն են կրօնաւորական երկու կանոններու՝ շարունակեալ Թուարկութեամբ, PG 31, սիւն 902-1305. Կանոնականներուն (Epitimia) համար տես PG 31, սիւն 1305 և յաջորդները։

Լուսարանելու համար յատկապէս արգոյ յօդուածազրին «Հարցմանց գրքին» վրայ ըսածները, սր տակաւին ձեռագիրներու մէջ միայն ծանօթ է, հարկ կը համարենք բացատրել որ Ս. Բարսղի կանոնները մեզի հասած են երկու գատ խումբերով, այսինքն Ընդարձակ (χατὰ πλάτος) և Համառօտ (χατὰ ἐπιτομήν). Այս կողմները կ'առնեն այն մեկնութիւններէն որով ներկայացուած են ընդհանրապէս այս կանոնները, այնուհանդերձ որ կարծերուն մէջ ալ չեն պակսիր երբեմն երկարներ։

Բոլոր այս կանոնները 368-ի կը հասնին, եթէ զուրս հանենք 4-ը, որ ոչ մէկ արժէք կը ներկայացնեն, որովհետեւ պատասխաններն են դարձեալ ուրիշ կանոններու. և կը բաժնուին 55 ընդարձակ և 313 համառօտ կանոններու։

Կան նաեւ բացատրութիւններ հարցումներու՝ Բարսղի գիտութեան անյագ աշակերտներէն առաջարկուած, այս պատճառաւ ալ հարցուպատասխանի ձեւով գրուած են,

նոյն իսկ հոն՝ ուր հարցումը ուրիշ բան չէ եթէ ոչ տխրորէ այն նիւթին որու վրայ կը խօսուի։

Յոյն հին ձեռագիրներու մէջ Ընդարձակները ոչ այլ ինչ էին բայց եթէ հոգեւոր կանոններու 20 գլուխներ, ստորաբաժանուած նիւթին խորագիրներով, և զերացը-նելու համար ուսումնասիրութիւնը՝ 55-ի բաժնուած։

Այս կանոններու մէջ կայ նիւթին բանաւոր կապ մը վարդապետական տրամաբանութեան ձեւին հետ, և նեւ բաժութեան մէջ սկիզբէն կը յայտնուի իր ճարտարախօսութեան հանդիսաւոր խօսուածքը։

Իսկ Համառօտներուն մէջ հակառակը կը տեսնենք, ասոնց մէջ չկայ կարգ մը, միայն երբեմն հարցումները նոյն կէտին վրայ կը դառնան, լաւ եւս հասկցուելու և ամբողջացնելու համար նիւթը. Համառօտ կանոնները յանգամանակաւ պատասխաններ են ամէն տեսակ հարցումներու. և հոգեւոր որդիները կը փութային յետոյ անմիջապէս զրի առնելու կարելի եղած մեծ հաւատարմութեամբ, և հաւանօրէն կ'ենթարկէին իրենց սուրբ Հօր հաւանութեան։

Թէպէտ ստոյգ չենք զիտեր թէ ինչ բանի մէջ կը կայանար Գրիգոր Նազիւնզացիի գործակցութիւնը կանոններու խմբագրութեան մէջ, սակայն անկասկած իր գրէն ալ պէտք է մաս ունեցած ըլլայ, իր թողած մէկ վկայութեան համաձայն թէ, «Եղբայրներու յորդորումով օրէնքները և կանոնները հաստատեցինք» (Նամակ 9)։

ԲԱԶՄԱՎԵՊ